ԿՈՆՑԵՌՆ ԴԻԱԼՈԳ
Փաստաբանական գրասենյակ

ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԵԼԻՍ ԻՆՉ Է ՊԵՏՔ ԻՄԱՆԱԼ

19.01.2023

+374 60 27 88 88 m2a@dialog.am www.dialog.am
Չարենցի 1, 207 սենյակ 0025 Երևան, Հայաստան

ՄԱՍ 2: ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ[1]

Սույն հոդվածը պատասխանում է վերջին ամիսների ընթացքում իրենց բիզնեսը (ամբողջովին կամ մասնակի) Հայաստան տեղափոխելով հետաքրքրվող ընկերությունների և անձանց կողմից ամենահաճախ տրվող հարցերին, որոնք հետաքրքրված են որևէ բիզնես նպատակներով իրավաբանական անձ հիմնադրելով կամ ուղղակի իրենց ապրելու վայրը փոխելով, այդպիսի գործընթացը ստացել է #վերաբնակեցում (անգլ. խմբ.՝ #relocation) անվանումը: Մենք հարկ ենք համարում ընդգծել, որ այս հոդվածում որևէ թեմայի վերաբերյալ պրակտիկայում ծագող իրավական հարցերի և դրանց պատասխանների սպառիչ ցանկ լուսաբանված չէ: Այս հոդվածը նպատակ է հետապնդում ընդհանրական տեղեկություններ տրամադրելով օգնել բիզնեսին, որպեսզի մարդիկ կարողանան Հայաստան տեղափոխվել կամ չտեղափոխվելու վերաբերյալ գիտակցված որոշում կայացնել: Այս հոդվածը մասնավորապես կանդրադառնա աշխատանքի թույլտվություն և կացության կարգավիճակ ստանալուն առնչվող իրավական գործընթացներին: Եթե հետաքրքրված եք Հայաստանում իրավաբանական անձ հիմնադրելով կարող եք դիտարկել այդ թեմայի վերաբերյալ մեր առաջին հոդվածը այստեղ:

Այս հրապարկմամբ մենք կանդրադառնանք հետևյալ հարցերին:

Աշխատանքի թույլտվություն և կացության կարգավիճակ Հայաստանում

1. Արդյոք անհրաժե՞շտ է Հայաստանում բնակվելու թույլտվություն ունենալ
2. Ինչպե՞ս ստանալ կացության կարգավիճակ՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հիմքով
3. Արդյոք անհրաժե՞շտ է թույլտվություն հայաստանյան ընկերությունում աշխատելու համար
4. Ինչպե՞ս ստանալ աշխատանքի թույլտվություն և աշխատանքի հիմքով կացության կարգավիճակ
5. Արդյոք անհրաժե՞շտ է գրանցվել Բնակչության պետական ռեգիստրում
6. Ինչպե՞ս ստանալ Հանրային ծառայությունների համարանիշ

[1] Սա Կոնցեռն Դիալոգ փաստաբանական գրասենյակի կողմից նախկինում հրապարակված հոդվածի երկրորդ խմբագրությունն է: Փոփոխությունը ներկայացված է 12.01.2023թ.-ի տվյալներով:

ԱՊՐԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. *Արդյոք անհրաժե՞շտ է հայաստանում բնակվելու թույլտվություն ունենալ*

Առաջին հերթին, պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը բազմակողմ և երկկողմ պայմանագրեր ունի շատ պետությունների հետ, որոնց հիմքով այդ պետությունների քաղաքացիները, ցանկացած տիպի անձնագիր ներկայացնելով, ազատված են մուտքի վիզա ունենալու պահանջից, այդ պետությունների ցանկը կարող եք գտնել հետևյալ հղումով՝ https://www.mfa.am/hy/whoneedvisa): Նրանք ՀՀ տարածքում կարող են մնալ տարեկան մինչև 180 օր: Այն դեպքում, երբ օտարերկրյա քաղաքացիները մտադրություն ունեն՝ Հայաստանում ավելի երկար ժամանակով մնալու, պետք է ստանան ժամանակավոր կացության կարգավիճակ:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է Հայաստանում մինչև մեկ տարի բնակվելու ժամկետով: Օրենսդրությունը նաև նախատեսում է այսպես կոչված մշտական կացության կարգավիճակի ձեռքբերում, որն օտարերկրացուն իրավունք է տալիս ՀՀ-ում բնակվելու 5 տարի ժամկետով:

Օտարերկրացուն ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրվում է օրենքով նախատեսված որոշակի հիմքերի առկայության պարագայում: Մասնավորապես, անձը կարող է կացության կարգավիճակ ստանալ, այն հիմքով, եթե նա՝

- **իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն Հայաստանում (իրավաբանական անձի բաժնետեր կամ գրանցված Անհատ ձեռնարկատեր), կամ**
- **ունի աշխատանքի թույլտվություն Հայաստանում կամ աշխատում է Հայաստանում և ազատված է աշխատանքի թույլտվություն ունենալու պահանջից, կամ**
- ՀՀ-ում աշխատանքի թույլտվության հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող կամ բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք ունեցող ամուսին, ծնող կամ երեխա են, կամ
- ուսում է ստանում ՀՀ-ում, կամ
- ՀՀ քաղաքացու կամ Հատուկ կամ Մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգական է (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ)
- ազգությամբ հայ է:

Օտարերկրացուն մշտական կացության կարգավիճակ տրամադրվում է օրենքով նախատեսված որոշակի հիմքերի առկայության պարագայում: Մասնավորապես, անձը կարող է ստանալ կացության կարգավիճակ, այն հիմքով, եթե նա՝

- **իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն Հայաստանում (իրավաբանական անձի բաժնետեր կամ գրանցված Անհատ ձեռնարկատեր), կամ**
- ազգությամբ հայ է
- ՀՀ քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կարգավիճակ ունեցող անձի ամուսինը կամ մերձավոր ազգականն է (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ), ՀՀ-ում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և առնվազն երեք տարի օրինական հիմքերով բնակվել է ՀՀ-ում:

Այս հոդվածը անդրադառնում է կացության կարգավիճակի ձեռքբերման երկու հիմքերին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելուն և ՀՀ-ում աշխատելուն:

2. Ինչպե՞ս ստանալ կացության կարգավիճակ՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հիմքով

Կացության կարգավիճակ տրվում է ՀՀ Ոստիկանության Անձնագրերի և Վիզաների Վարչության[2] կողմից. Վարչության գտնվելու վայրը կարող եք գտնել այստեղ:

Հայաստանում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հիմքով կացության կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը:

1. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի գործակալության քաղվածքը, որը կհավաստի, որ ընկերությունը գրանցված է ՀՀ-ում (ընկերություն կամ ԱՁ),
2. Տեղեկանք՝ Հարկային մարմնից՝ հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ,
3. Տեղեկանք՝ առողջական վիճակի մասին
4. Պետական տուրքի վճարման անդորրագիր՝ մշտական կացության ձեռքբերման համար՝ 140.000 ՀՀ դրամի չափով և ժամանակավոր կացության կարգավիճակի ձեռքբերման համար՝ 105.000 ՀՀ դրամի չափով,
5. Դիմում (լրացվում է տեղում),

[2] Հասցե՝ շենք 17/10, 4-րդ թաղամաս, Դավթաշեն, Երևան 0054, Աշխատանքային ժամեր՝ Երկ, Երք, Չրք, Հինգ, Ուրբ 09:00-17:00, ընդմիջում 14:00-15:00

6. 3 հատ 35 x 45 չափի գունավոր լուսանկար,
7. Անձնագիրը[3], անձնագրի պատճենը, անձնագրի նոտարական վավերացմամբ հայերեն թարգմանությունը.
8. Լիազորագիր, եթե դիմումը ներկայացնում է լիազորված անձը

Անձնագրերի և Վիզաների Վարչությունը կացության կարգավիճակ տրամադրելու կամ մերժելու որոշումը կայացնում է դիմումը ներկայացնելուց հետո 30-օրյա ժամկետում: Բացի այդ կարևոր է նշել, որը նախքան Անձնագրերի և Վիզաների Վարչությանը որոշման կայացումը, ՀՀ Ազգային Անվտանգության Ծառայությունը եզրակացություն է տրամադրում վերջինիս, որը կազմվում է Ազգային Անվտանգության Ծառայության կողմից իրականացված ստուգումների հիման վրա, ընդհուպ մինչև այցելություն դիմողի բիզնես գործունեության կամ փաստացի բնակության հասցե:

3. Արդյոք անհրաժե՞շտ է թույլտվություն հայաստանյան ընկերությունում աշխատելու համար

Նախքան ՀՀ-ում աշխատանքի հիմքով կացության կարգավիճակ ձեռք բերելը անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ-ում աշխատանքի թույլտվություն ունենալու պահանջներին: **Ընդհանուր կանոնի համաձայն, եթե անձը ՀՀ քաղաքացի չէ և հայաստանյան ընկերությունում աշխատելու կամ ծառայություններ մատուցելու մտադրություն ունի, պետք է աշխատանքի թույլտվություն ունենա:**

Այնուամենայնիվ այս ընդհանուր կանոնից առկա են որոշակի բացառություններ, որը անձը պետք է նկատի ունենա իր համար աշխատանքի թույլտվություն ունենալու պահանջի կամ այդ պահանջից ազատված լինելու հարցը որոշելիս.

1. ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիները ազատված են աշխատանքի թույլտվություն ունենալու պահանջից (օրինակ՝ եթե անձը ՌԴ-ի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի հանրապետությունների քաղաքացի է, ապա ազատված է աշխատանքի թույլտվություն ունենալու պահանջից)
2. անձինք, որոնք արդեն ունեն մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ
3. կանոնադրությամբ կեսից ավելիին ձայնի իրավունք տվող օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող առևտրային կազմակերպությունների հիմնադիրները և գործադիր մարմնի ղեկավարները՝ տվյալ կազմակերպություններում աշխատելու նպատակով,
4. օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունների աշխատակիցները՝ Հայաստանի Հանրապետությունում տեղակայված այդ կազմակերպությունների ներկայացուցչություններում աշխատելու նպատակով,

[3] Դիմումը ներկայացնելու պահին դիմողը պետք է ՀՀ-ում գտնվի

5. Անձինք, որոնք արդեն ունեն ժամանակավոր կացության կարգավիճակ՝ հետևյալ հիմքերից մեկով՝ (i) ՀՀ-ում ուսման, (ii) ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ունեցող անձի ամուսին կամ մերձավոր ազգական լինելու, (iii) ազգությամբ հայ լինելու:

Ցանկը սպառիչ չէ: Բացառությունների ամբողջական ցանկը նախատեսված է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով:

4. Հայաստանյան ընկերությունում աշխատելու հիմքով կացության կարգավիճակի ձեռքբերումը

Գործող օրենսդրության համաձայն հայաստանյան ընկերությունում աշխատելու հիմքով կացության կարգավիճակի ձեռքբերումը իրականացվում է աշխատանքի թույլտվություն ձեռքբերելու հետ միաժամանակ՝ նույն վարչական վարույթի շրջանակներում: Մասնավորապես, **գործընթացը պարզեցվել է և աշխատանքի թույլտվության ստացումը ու կացության կարգավիճակի ստացումը իրականացվում են մեկ վարույթով. ինչը նշանակում է, որ մեկ դիմում է ներկայացվում աշխատանքի թույլտվություն և աշխատանքի հիմքով կացության կարգավիճակ ստանալու համար[4]:**

Ընդհանուր կանոնի համաձայն կացության կարգավիճակ տրամադրող մարմինը Անձնագրերի և Վիզաների Վարչությունն է, բայց աշխատանքի թույլտվություն և աշխատանքի թույլտվության հիմքով կացության կարգավիճակ ստանալու դիմումները էլեկտրոնային եղանակով ներկայացվում են Միգրացիոն Ծառայության[5] կողմից վարվող էլեկտրոնային հարթակի միջոցով:

Էլեկտրոնային համակարգի միջոցով աշխատանքի թույլտվություն և կացության կարգավիճակ ստանալու համար առաջին հերթին գործատուն պետք է գրանցվի հարթակում: Գործատուն անցնում է նույնականացում՝ նույնականացման քարտի, շարժական քարտի (mobile ID), իսկ այն դեպքերում, երբ գործատուի ներկայացուցիչը (տնօրեն, նախագահ, կամ այլ) օտարերկրյա քաղաքացի է, ապա նա պետք է անձամբ ներկայանա Միգրացիոն Ծառայություն և գրանցվի այնտեղ: Գրանցման գործընթացի ավարտից հետո գործատուն հարթակում ստեղծում է թափուր աշխատատեղ:

Գործատուն թափուր աշխատատեղը օտարերկրյա քաղաքացիով լրացնելու մասին ծանուցվում է 15-օրյա ժամկետում, որից հետո երեք օրվա ընթացքում գործատուն պետք է հարթակում ներկայացնի անհրաժեշտ տեղեկատվություն[6] աշխատողի մասին:

---

[4] ԵԱՏՄ քաղաքացիների աշխատանքի հիմքով կացության կարգավիճակ ստանալու ընթացակարգի առանձնահատկությունները ներկայացված են ստորև

[5] Հարթակ կարող եք մուտք գործել հետևյալ հղումով՝ https://workpermit.am/am/register

[6] Դիմողը պետք է փաստացի բնակության հասցե ունենա ՀՀ-ում

Ինչպես նաև պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը.

1. անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
2. օտարերկրացուն աշխատանքի ընդունելու պարտավորությունը հավաստող փաստաթղթի լուսապատճենը,
3. կրթությունը հաստատող փաստաթղթի լուսապատճենը,
4. ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համարանիշը (եթե առկա է),
5. 35 x 45 չափի գունավոր լուսանկար
6. պետական տուրք սահմանված է 105.000 ՀՀ դրամ[7] գումարի չափով

Միգրացիոն Ծառայությունը կացության կարգավիճակ տրամադրելու կամ կացության կարգավիճակի տրամադրումը մերժելու մասին որոշում կայացնում է դիմումը ներկայացնելուց հետո 30-օրյա ժամկետում: ՀՀ Ազգային Անվտանգության Ծառայությունը նախքան Միգրացիոն Ծառայության որոշման կայացումը, եզրակացություն է տրամադրում վերջինիս, որը կազմվում է Ազգային Անվտանգության Ծառայության կողմից իրականացված ստուգումների հիման վրա, ընդհուպ մինչև այցելություն դիմողի փաստացի բնակության հասցե:

Բնակության նպատակով օտարերկրացու ընտանիքի անդամների համար (ՀՀ-ում չեն աշխատում) կացության կարգավիճակի դիմում ներկայացնելիս լրացվում է նույն տեղեկատվությունը, ինչը օտարերկրացու համար (բացառությամբ կրթությունը հավաստող փաստաթղթի և օտարերկրացուն աշխատանքի ընդունելու պարտավորությունը հավաստող փաստաթղթի լուսապատճենների), ինչպես նաև ամուսինների դեպքում ներկայացվում է ամուսնության վկայականը, իսկ երեխաների դեպքում՝ ծննդյան վկայականը:

Հարթակը օգտագործողի ուղեցույցը կարող եք գտնել այստեղ:

5. ԵԱՏՄ քաղաքացիների համար կացության կարգավիճակի ձեռքբերումը՝ աշխատանքի հիմքով:

Ինչպես վերևում արդեն նշվել է, ԵԱՏՄ քաղաքացիները կարող են բնակվել ՀՀ-ում տարեկան մինչև 180 օր: Այն դեպքում, երբ ԵԱՏՄ քաղաքացին 180 օրից ավել ժամկետով մնալու մտադրություն ունի, պետք է ստանա բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք:

ԵԱՏՄ քաղաքացիների պարագայում դիմումը ևս ներկայացվում է Միգրացիոն Ծառայության կողմից վարվող հարթակի միջոցով:

Այս ընթացակարգում նախորդից տարբերությունը այն է, որ կարիք չկա, որպեսզի գործատուն գրանցվի հարթակում և 15 օր սպասի՝ թափուր աշխատատեղը

[7] Այս գումարը միայն ներառում եմ կացության կարգավիճակի համար գանձվող պետական տուրքի վճարը, ի տարբերություն օրենսդրական նախկին կարգավորումների, աշխատանքի թույլտվություն ստանալու համար առանձին պետական տուրք չի վճարվում

օտարերկրյա քաղաքացիով լրացնելու թույլտվությանը (ավելին դիմելու պահին անհրաժեշտ է, որ դիմողը ստորագրված աշխատանքային պայմանագիր ունենա), ինչպես նաև օտարերկրացու կրթությունը հավաստող փաստաթուղթ ներկայացանելու պահանջ չկա: ԵԱՏՄ քաղաքացին դիմումը ներկայացնելիս պետք է ՀԾՀ ունենա:

ԵԱՏՄ քաղաքացիները ՀՀ-ում կացության կարգավիճակ ստանալու համար պետական տուրք վճարելու պարտավորությունից ազատված են:

Հարթակում գրանցված ԵԱՏՄ քաղաքացին իր հարթակում կարող է լրացնել ՀՀ-ում չաշխատող իր ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալները: Նույն տեղեկատվությունն ու փաստաթղթերը պետք է լրացվեն (բացառությամբ աշխատանքային պայմանագրի) ինչպես նաև անհրաժեշտ է ներկայացնել ամուսնության վկայական՝ ամուսինների և ծննդյան վկայական երեխաների համար:

Միգրացիոն ծառայությունը կայացնում է կացության կարգավիճակ տրամադրելու կամ կացության կարգավիճակի տրամադրումը մերժելու մասին որոշում դիմումը ներկայացնելուց հետո 30-օրյա ժամկետում: Ազգային Անվտանգության Ծառայությունը ստուգումներ չի իրականացնում, երբ աշխատանքի հիմքով կացության կարգավիճակ ստանալու համար դիմողը ԵԱՏՄ քաղաքացի է:

Հավելյալ տեղեկատվություն կարող եք գտնել այստեղ:

Օտարերկրյա քաղաքացիները և ԵԱՏՄ քաղաքացիները ստանում են ժամանակավոր կացության կարգավիճակ կամ բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք՝ անձամբ Միգրացիոն Ծառայություն[8] ներկայանալու միջոցով:

6. *Ինչպե՞ս գրանցվել բնակչության պետական ռեգիստրում*

Աշխատանքի թույլտվություն (եթե կիրառելի է) և կացության կարգավիճակ ստանալուց հետո 15 օրվա ընթացքում օտարերկրացին պետք է դիմի տեղական Անձնագրերի և Վիզաների Վարչություն՝ բնակչության պետական ռեգիստրում գրանցվելու համար:

Դիմելու երկու եղանակ կա՝ աշխատողի բնակարանի սեփականատիրոջ համաձայնությամբ և փաստացի բնակության հասցեով:

Սեփականատիրոջ համաձայնությամբ բնակչության պետական ռեգիստրում գրանցման դեպքում (այս ընթացակարգը ավելի պարզեցված է), հետևյալ փաստաթղթերը անհրաժեշտ են ներկայացնել տեղական Անձնագրերի և Վիզաների Վարչությունում

- դիմում (լրացվում է վարչությունում՝ սեփականատիրոջ կողմից)
- սեփականության վկայականը և սեփականատիրոջ անձնագիրը

[8] ՀՀ, 0037, Երևան Կարապետ Ուլնեցու փ., շենք 31/3, Աշխատանքային ժամեր Երկ, Երք, Չրք, Հինգ, Ուրբ 09:00-18:00, ընդմիջում 13:00-14:00

- աշխատողի կացության քարտը և դրա պատճենը
- աշխատողի կամ նրա լիազորված անձի ներկայությունը ևս անհրաժեշտ է (լիազորված անձի պարագայում ներկայացվում է լիազորագիր)

Դիմումը ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օր հետո անձը ներառվում է բնակչության պետական ռեգիստրում: 1.000 ՀՀ դրամ գումարի չափով պետական տուրք է նախատեսված:

Աշխատողի կողմից բնակչության պետական ռեգիստրում փաստացի բնակության հասցեով գրանցվելու դեպքում հետևյալ փաստաթղթերն են անհրաժեշտ ներկայացնել Անձնագրերի և Վիզաների վարչություն:

- դիմում (լրացվում է աշխատողի կամ նրա լիազորված անձի կողմից)
- հասցեում բնակվելը հավաստող փաստաթուղթ, (եթե առկա է, սա չներկայացնելը խոչընդոտ չէ)
- աշխատողի կացության քարտը կամ դրա պատճենը
- Աշխատողի կամ նրա լիազորված անձի ներկայությունը պարտադիր է (լիազորված անձի դեպքում ներկայացվում է լիազորագիր)

Դիմումը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում (որոշ դեպքերում կարող է 3-5 օրից ավելի երկար տևել), տեղական ոստիկանության պետք է ստուգի անձի նշված հասցեում փաստացի բնակվելու հանգամանքը՝ այցելելով նշված հասցեում (նրանց տրամադրվում է աշխատողի կոնտակտը և սովորաբար նախքան այցը ոստիկանության ներկայացուցիչը կապվում է աշխատողի հետ և զգուշացնում): Երբ ստուգելու գործընթացը ավարտվում է, ոստիկանությունից քաղվածք են տրամադրում Անձնագրերի և Վիզաների վարչություն, որը հաստատում է անձի նշված հասցեում փաստացի բնակվելու հանգամանքը: Քաղվածքը ստանալուց հետո, ներառումը բնակչության պետական ռեգիստրում գրանցվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում: 1.000 ՀՀ դրամ գումարի չափով պետական տուրք է նախատեսված:

7. *Ինչպե՞ս ստանալ հանրային ծառայությունների համարանիշ*

Հայաստանի Հանրապետությունը ՀԾՀ է տրամադրում ՀՀ քաղաքացիներին, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրացիներին, մասնավորապես այն օտարերկրացիներին, որոնք ունեն կացության կարգավիճակ կամ ՀՀ-ում մինչև 180 օր մնալու իրավունք: Այն ունի չկրկնվող համարանիշ և անհրաժեշտ է աշխատանքի, բանկային հաշիվներ բացելու, հարկեր վճարելու, լիցենզիաներ ստանալու համար:

ՀԾՀ ստանալու համար կացության կարգավիճակ ունեցող անձը պետք է դիմի Անձնագրերի և Վիզաների Վարչություն և ներկայացնի

1. դիմում (լրացվում է տեղում),
2. կացության կարգավիճակ չունեցող, սակայն ՀՀ-ում օրինական հիմքերով գտնվելու պարագայում օտարերկրյա քաղաքացին անձնագիր՝ տրված օտարերկրյա պետության համապատասխան լիազոր մարմնի կողմից,

ինչպես նաև անձնագրի նոտարական վավերացված հայերեն թարգմանությունը,

3. կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացին կացության կարգավիճակը հավաստող քարտը և դրա պատճենը

Դիմումը լրացնելից Անձնագրերի և Վիզաների Վարչությունը պահանջում է նաև օտարերկրացու ծննդյան վկայականի պատճենը: